

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԼԻԱՆՍ ՖՐԱՆՍԵԶ»
ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Մայրենի լեզվի օգտագործման անհրաժեշտությունն ու
սահմանները ֆրանսերեն լեզվի դասավանդման մեջ

ԴՊՐՈՑ՝ Վարդաբլուրի միջնակարգ դպրոց

ԿՍՏԱՐՈՂ՝ Ռուզան Աբգարյան

ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ Սյուզան Ղարամյան, Զեմֆիրա Ավետիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն -----	3
Լեզուների <<հարազատությունը >> -----	5
Մայրենի և օտար լեզուների խաչմերուկում -----	11
Եզրակացություն -----	15
Օգտագործված գրականության ցանկ -----	17

Մայրենին՝ օտար լեզվի ուսուցման քանալի

Ներածություն

Իմանալ շատ լեզուներ, նշանակում է

ունենալ մեկ կողպեքի բազմաթիվ

քանալիներ: / Վոլտեր /

Լեզուն եղել է, կա և կմնա միջմարդկային հաղորդակցության կարևորագույն բնական միջոցը: Սակայն միայն մայրենի լեզվին տիրապետելը սահմանափակում է աշխարհը բացահայտելու, գործունեության տարբեր բնագավառներ ներթափանցելու, մասնագիտական ոլորտում կատարելագործվելու, հայրենիքը օտարին ներկայացնելու, համաշխարհային մշակույթին, մարդկության առաջադեմ գաղափարներին ծանոթանալու և բազմաթիվ այլ գործառույթներ: Այստեղից էլ բխում է դպրոցում օտար լեզվի ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու կարևորությունը և անհրաժեշտությունը: Այսօր, որքան էլ արդիական ու պահանջված է այլ լեզուների իմացությունը, այն չի կարող ստվեր նետել մայրենի լեզվի վրա, ավելին, յուրաքանչյուր օտար լեզու պետք է ուսուցանվի ոչ միայն մայրենիի հենքի վրա, այլև կարևոր է գիտակցել, որ ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է աշակերտների կողմից մայրենի լեզվի իմացության խորությունից:

Մանկավարժական գործունեության ընթացքում պարբերաբար համոզվում ենք, որ մի կողմից, մայրենի լեզվին, հնարավորինս լիարժեք, տիրապետելը անհամեմատ հեշտացնում է օտար լեզվի յուրացումը, մյուս կողմից, օտար լեզվի դասագրքերում և ուսումնական ծրագրերում հաճախ են լինում թեմաներ, որոնք չեն համապատասխանում դրանք մայրենի լեզվի հետ համաժամանակյա ուսումնասիրման համատեքստում: Այս պատճառով է, որ օտար լեզվի ուսուցանումը լուրջ, անհրաժեշտ, միաժամանակ հետաքրքիր և բարդ աշխատանք է, որը, փոխարենը, պարզևատրվում է հաճելի դիտարկումներով:

Օտար և մայրենի լեզուների դասավանդումը պահանջում է միանգամայն տարբեր մեթոդներ ու մոտեցումներ: Մասնավորապես, եթե մայրենի լեզվի ուսուցանումը գործնականում չի ենթադրում զուգահեռների անցկացում այս կամ այն օտար լեզվի հետ, ապա, ընդհակառակը, օտար լեզվի յուրացումը չի կարող լիարժեք լինել առանց մայրենիի հետ զուգահեռների, և անհրաժեշտաբար խարսխվում է մայրենի լեզվի պատշաճ իմացության վրա:

Ներկայացվող աշխատանքը բաղկացած է երկու մասից, որոնցից առաջինում մենք շեշտը դնում ենք մայրենի և օտար լեզուների համեմատության վրա, որը առարկայի նկատմամբ ձևավորում է հետաքրքրություն, իսկ երկրորդում ընդգծում ենք նույն լեզուների համեմատություններից աստիճանաբար հրաժարվելու կարևորությունը, որը մեծապես նպաստում են աշակերտների կողմից հենց օտար լեզվով մտածելու հմտության ձեռքբերմանն ու զարգացմանը:

Մաս առաջին

Լեզուների <<հարազատությունը >>

Ով չգիտի օտար լեզուներ, գաղափար

չունի և իր լեզվի մասին:

/Գյոթե /

Համաշխարհայինացման (գլոբալիզացիայի) արդի դարաշրջանում մենք ապրում ենք մի միջավայրում, որն աչքի է ընկնում մշակույթների բազմազանությամբ, և որտեղ ամենօրյա մեր հանդիպումներում ու շփումներում ավելի ու ավելի ենք բախվում օտար մշակույթներին ծանոթանալու և այլ լեզուներին տիրապետելու կենսական անհրաժեշտության հետ: Ժամանակակից կյանքն ինքն է ստիպում իմանալու, ուսումնասիրելու, վերջապես, այլ մշակույթները մեզ համար բացահայտելու կարևորությունը: Այդ ամենի բանալին հենց օտար լեզուներին տիրապետելն է:

Հատկապես վաղ տարիքում օտար լեզուների հետ ծանոթությունը օգնում է սովորել հարգել այլ մշակույթները՝ սեփական լեզուն սիրելով: Մասնագիտական գրականության մեջ բավականին տարածված է այն տեսակետը, ըստ որի օտար լեզուներ սովորելու միակ և անփոխարինելի միջոցը մայրենին է: Ընդհանուր առմամբ համաձայն լինելով այս տեսակետի հետ, այնուամենայնիվ, մեզ ավելի համոզիչ է թվում այն կարծիքը, համաձայն որի օտար լեզվի յուրացումը դարձնող լեզու կարող է լինել միայն այն լեզուն, որին մենք տիրապետում ենք լիարժեք՝ անկախ նրանից դա մայրենի լեզուն է, թե որևէ այլ ցանկացած օտար լեզու: Ավելին, մայրենի լեզուն՝ որպես օտար լեզվի ուսուցմանը օժանդակող կարևորագույն միջոց, կարող է հանդես գալ միայն այն դեպքում, երբ դրան, այսինքն, մայրենիին, տիրապետում ենք առավելագույնս:¹

1. Տես՝ <https://expeducation.ru/ru/article/view?id=11691>

Օտար լեզուների դասավանդման գործընթացում մայրենի լեզվի օգտագործումը պետք է կրի ոչ թե հախուռն, ցիրուցան , այլ գիտակցված, նպատակային բնույթ: Մասնագետների շրջանում լայնորեն ընդունված է այն համոզմունքը, որի համաձայն օտար լեզվի յուրացման արդյունավետությունը զգալի չափով կախված է դասապրոցեսում մայրենի լեզվի օգտագործումը նվազագույնի հասցնելու պայմանից: Այլ կերպ ասած, դասավանդման ընթացքում, հնարավորինս, պետք է խուսափել մայրենի լեզվի անհարկի գործածումից: Հիմնականում համակարծիք լինելով այդ տեսակետի հետ, այնուամենայնիվ, գործնականում համոզվում ենք, որ այդ մոտեցումը հնարավոր չէ լիովին կիրառել տարրական դասարաններում, որտեղ մայրենի լեզուն համարվում է բառապաշարի հարստացման և ուսումնասիրվող նյութի շրջանակներում նոր արտահայտությունների յուրացման գործիք: Օտար լեզվի հետ ծանոթությունը և ապա յուրացումը առաջին հերթին, անխուսափելիորեն, անցնում է մայրենի լեզվի պրիզմայով: Աշակերտները օտար լեզվի բառապաշարի հարստացման, քերականական կանոնների յուրացման ընթացքում փնտրում են նմանատիպ տարրեր մայրենի լեզվում:

Մայրենիի հետ օտար լեզվի համակարգված, հիմնավորված համեմատությունները ոչ միայն նպաստում են տվյալ օտար լեզվի յուրացման արդյունավետության բարձրացմանը, այլև աշակերտների մոտ ձևավորում են վերլուծական միտք, տրամաբանական մտածողություն: Ինչպես գրում է Ա. Ս. Խոլկինան իր << Մայրենի և օտար լեզուները բազմաշակույթ աշխարհում ուսուցման հիմնախնդիրները>> հոդվածում. << Մայրենի լեզուն միջնորդ է, այն անփոխարինելի դեր ունի ոչ միայն օտար լեզվի ուսուցման գործընթացում, այլ նաև ձևավորում է մտածող մարդ>>:¹

Եթե օտար լեզվի դասավանդման, հատկապես, սկզբնական շրջանում աշակերտը, այնուամենայնիվ, իրեն զգում է կաշկանդված, որպես կանոն չի ցուցաբերում ակտիվություն ու ջանասիրություն, ապա հենց մայրենի լեզվի պատշաճ

1. <https://cyberleninka.ru/article/n/rodnoy-i-inostranny-yazyki-v-multikulturnom-mire-problemy-obucheniya/viewer>

իմացությունն է օգնության գալիս՝ հաղթահարելու այդ դժվարությունները և նպաստում քայլ առ քայլ ձեռք բերելու ինքնավստահություն և հետաքրքրություն առարկայի նկատմամբ: Մայրենի լեզուն է հենց այն ապահով անկյունը, որտեղ աշակերտը իրեն զգում է անհամեմատ ազատ, չի խուսափում արտահայտվել և բարձրացնել իր մոտ, բնականաբար, ծագող բազմաթիվ հարցեր: Աշակերտը որքան լավ է տիրապետում մայրենի լեզվին, այնքան նրա մոտ ավելի մեծ հետաքրքրություն է առաջանում օտար լեզվի նկատմամբ, հետևաբար, ինչպես և սպասելի է, ավելի դյուրին է յուրացնում այն: Աստիճանաբար, օտար լեզուն է դառնում գրավիչ:

Ամեն ինչ սկսվում է այբուբենից: Աշակերտների բուն հետաքրքրությունը, պատշաճ մատուցման պարագայում, սկսվում է հենց այն << նորությունից >> երբ իմանում են, որ ոչ բոլոր լեզուներն ունեն այնքան տառ, որքան հայերենը: Ամեն ինչ պետք է անել, որպեսզի նրանց մոտ փոքր ինչ անգամ չստվերվի այդ առողջ և ինքնաբերական հետաքրքրությունը: Նրանք զարմանքով են իմանում, որ ֆրանսերենում գոյություն ունեցող տառերն ավելի քիչ են, քան հայոց լեզվում, և որ որոշ հնչյուններ գրվում են երկու և ավելի տառերով (ch, tch, ph, œ): Նույնը վերաբերում է նաև թվերին, հանկապես, երբ իմանում են, ինչպես ֆրանսիացիներն են ասում. << Ֆրանսերենով հաշվելու համար հարկավոր է մաթեմատիկա իմանալ>>: Մեր աշակերտներին ֆրանսերենի թվերը թվում են շատ զվարճալի, որը դառնում է դրանց յուրացումը հեշտացնող նոր խթան:

Այս կամ այն թեմայի ուսումնասիրման դասապրոցեսում մայրենի և օտար լեզուների միջև համեմատություններ անցկացնելը մի կողմից շարունակում է ապահովել աշակերտների հետաքրքրասիրությունը առարկայի նկատմամբ, մյուս կողմից, շնորհիվ նաև դրա, նպաստում է թեմայի յուրացմանը: Օրինակ՝ հարկավոր է աշակերտին բացատրել, որ, այն դեպքում, երբ, ի տարբերություն, հայոց լեզվի, որտեղ << ե >>, << ո >>, << և >> տառերը արտահայտվում են, համապատասխանաբար, << յ >>, << վ >>, << եվ >> հնչյուններով, ապա ֆրանսերենում, ինչպես արդեն նշվել է, գոյություն ունեն տառամիացություններ, որոնք գրվում են երկու, երբեմն երեք

տառով, սակայն արտահայտում են մեկ հնչյուն (au, ou, eau, aux և այլն) : Նմանատիպ համեմատությունները ոչ միայն նպաստում են ֆրանսերենի յուրացմանը, այլև խորացնում են մայրենի լեզվի համապատասխան թեմայի իմացությունը:

Ակնհայտ է, որ երբ օտար լեզվի ուսուցանման ընթացում մենք տանում ենք անհրաժեշտ զուգահեռներ մայրենիի հետ, երբ բացահայտում ենք համապատասխան թեմաների օրինաչափությունների ընդհանրություններն ու տարբերությունները, ապա լեզվի յուրացումը ուղեկցվում է պակաս դժվարություններով: Մասնավորապես, եթե աշակերտի մայրենին հայոց լեզուն է, նա սովորաբար չի քննարկում գոյականի նկատմամբ ածականի գրաված դիրքի խնդիրը: Սակայն, բախվելով ֆրանսերեն լեզվում ածականի կիրառման առանձնահատկության հարցին, նա սկսում է այլ կերպ վերաբերել մայրենիի յուրահատկությանը, նրա մոտ ձևավորվում է լեզուների միջև զուգահեռներ անցկացնելու պահանջ: Մայրենիի դասավանդման ընթացքում աշակերտը, պարզապես, իր մտքում ամրագրում է, որ ածականը գրվում է գոյականից առաջ, և նրա մոտ նույնիսկ հարց չի առաջանում, թե ինչու, որովհետև իր և՛ գրավոր, և՛ բանավոր խոսքում հենց այդպես էլ վարվում է, ու դա նրան թվում է միանգամայն բնական: Իսկ երբ իմանում է, որ ֆրանսերենում, ընդհակառակը, որպես կանոն, ածականը գրվում է գոյականից հետո, օրինակ՝ կարմիր վարդ - une rose rouge, կլոր սեղան - une table ronde, հետաքրքիր գիրք - un livre intéressant, նրա մոտ առաջանում է հարց, ոչ միայն այն մասին, թե ինչու է ֆրանսերենում այդպես, այլ նաև այն մասին, թե ինչու է հայերենում հակառակը:

Այս և բազմաթիվ այլ նման օրինակներ գալիս են հաստատելու, այն տեսակետը, որ օտար լեզվի ուսուցման գործընթացում շատ կարևոր է ոչ միայն աշակերտի մայրենի լեզվի իմացությունը, այլ նաև լեզուների միջև համեմատություն անցկացնելու անհրաժեշտությունը: Վերջինս նպաստում է ավելի լավ հասկանալ օտար լեզվի բովանդակությունը, բացահայտել քերականական, հնչյունաբանական, բառագիտական յուրահատկությունները, որոնց հետ աշակերտները բախվում են մայրենի լեզվի հետ համեմատելիս: Ավելին, դա նաև գալիս է հաստատելու այն կարծիքը, որ օտար լեզվի ուսուցիչն ինքը առավելագույնս պետք է տիրապետի մայրենիին:

Չնայած, հայոց լեզուն և ֆրանսերենը պատկանում են տարբեր լեզվաընտանիքների, ու, բնականաբար, դրանք աչքի են ընկնում բազմաթիվ յուրահատկություններով, այնուամենայնիվ, ֆրանսերեն լեզվի և հայերենի միջև կա նաև որոշակի <<հոգեհարազատություն >>, որը նույնպես բացահայտվում է նշված լեզուների համեմատության միջոցով և դրանքին է դարձնում ֆրանսերենի յուրացումը: Մասնավորապես, ի տարբերություն այլ լեզուների, որտեղ չկա ֆրանսերենում լայնորեն տարածված << ղ >> հնչյունը, հայոց լեզուն թույլ է տալիս աշակերտներին հեշտությամբ արտասանել այլ լեզուներում դժվար արտաբերվող " r " հնչյունը: Որոշ դեպքերում մայրենի լեզուն օգնում է նաև ստուգաբանական կապ ստեղծել երկու իրարից տարբեր լեզուների մեջ, միջլեզվական համապատասխանությունների մակարդակում բացահայտել բառի ներքին ձևը, տեսնել, օրինակ, ասացվածքների ու դարձվածքների իմաստը, հետևել բառերի իմաստային զարգացումներին ու տարբերություններին: Դարձվածք – ասացվածք թեման ուսումնասիրելու ընթացքում աշակերտները, հաճախ մեկ բառ թարգմանելով, կռահում են հայերեն համարժեքը: Օրինակ՝ " Qui vole un œuf, vole un bœuf" ասացվածքում բավական է իմանալ **œuf** (**ձու**) և **voler** (գողանալ) բառերի թարգմանությունը, և բոլորն անմիջապես կռահում են, թե որ ասացվածի մասին է խոսքը. << Ձու գողացողը ձի էլ կգողանա>>: Իհարկե, նրանց մոտ հարց է ծագում, թե ինչու է հայերեն տարբերակում <<ձի>>, իսկ ֆրանսերեն տարբերակում՝ <<կով>>: Բացատրությունը հետևյալն է, երկու լեզուներում էլ փորձել են պահպանել հանգերը, ու հնչողության միջոցով հեշտացնել դրանք հիշողության մեջ պահելը:

Այսպիսով, օտար լեզու դասավանդելիս անհրաժեշտ է սովորողներին <<ներքաշել>> մայրենի և օտար լեզուների լեզվական առանձնահատկությունները ակտիվորեն համեմատելու գործընթացի մեջ: Փորձը ցույց է տվել, որ համեմատական – համադրական մոտեցումները էապես նպաստում են աշակերտների առաջադիմության բարձրացմանը:¹ Տվյալ սկզբունքը կարող է շատ արդյունավետ լինել, եթե, ինչպես արդեն նշվել է, ուսուցիչը լիարժեքորեն է տիրապետում մայրենի լեզվին, այլապես նրա համար դժվար կլինի աշակերտներին բացատրել որոշ

1. <https://cyberleninka.ru/article/n/rol-rodного-yazyka-v-izuchenii-inostrannyh-yazykov-novyiy-rakurs/viewer>

Թեմաներ: Ուսուցիչն այստեղ կենտրոնական անձ է, ով պարտավոր է աշակերտներին ծանոթացնել օտար լեզվամշակույթի նրբություններին՝ նրանց մոտ հետաքրքրություն առաջացնելով դասավանդվող առարկայի նկատմամբ:

Մաս երկրորդ

Մայրենի և օտար լեզուների խաչմերուկում

Լեզուն մի ողջ սերնդի դարավոր
աշխատանքն է :

/Վ. Ի. Դալ /

Օտար լեզվի դասավանդման գործընթացում, ինչին արդեն անդրադարձել ենք աշխատանքի առաջին մասում, մենք, ելնելով ուսուցանվող թեմաների առանձնահատկություններից, որպես կանոն, համեմատում ենք մայրենի և օտար լեզուները, ընդ որում ոչ թե ինքնանպատակ, այլ նկատի ունենալով, որ լեզուների համեմատությունը մեծապես օգնում է աշակերտների կողմից օտար լեզվի յուրացմանը: Մի դեպքում գտնում ենք նմանություններ լեզուների միջև, որոնք օգնում են ավելի պարզ ընկալել լեզվական նյութը ու հեշտությամբ այն յուրացնել, մյուս դեպքում մատնանշում ենք մայրենի և օտար լեզուների միջև գոյություն ունեցող տարբերությունները, ինչն էլ նպաստում է լեզվի նկատմամբ սովորողների հետաքրքրության բարձրացմանը ու նրանց մոտ քննադատական մտածողության ձևավորմանը: Աշակերտները շատ հաճախ իրենք են փորձում գտնել լեզուների միջև գոյություն ունեցող տարբերությունները՝ դրանց նույնիսկ տալով սեփական, երբեմն, ինքնատիպ բացատրություններ: Մասնավորապես, երրորդ դասարանում, երբ սովորողները նոր-նոր են ծանոթանում ֆրանսերեն լեզվին ու ամեն մի նոր դասի նոր բառեր են սովորում, հանդիպելով գոյականների հոդին, առաջին հարցը, որը հետաքրքրում է նրանց, հաճախ հետևյալն է. «< Ինչու՞ է սեղանը <<աղջիկ>> », կամ ինչու՞ է գիրքը <<տղա>>, ինչու՞ է տունը << աղջիկ>> և ինչու՞ է գրատախտակը <<տղա>>... Անգամ նկատել եմ, որ դասամիջոցներին երեխաները, միմյանց հերթ չտալով, հարցեր են տալիս, օրինակ՝ «< Ինքնաթիռը <<աղջիկ>> է, թե <<տղա>>, կամ գնդակը <<աղջիկ>> է, թե <<տղա>>... Ու փորձում են իրենք էլ պատասխանել

սեփական հարցերին: Աշակերտների այս պարզ, մանկական հարցադրումները, աշակերտներ, ովքեր արդեն գիտեն, որ իրենց մայրենի լեզվում գոյականը չունի սեռ, վկայում են, որ նրանց մոտ շարժվել է հետաքրքրասիրությունը ուսուցանվող օտար լեզվի նկատմամբ: Ինձ՝ որպես դասավանդող ուսուցչի, դա մեծապես ոգևորում է, և ես ամեն կերպ փորձում եմ, որ սովորողների այդ ինքնաբերական հետաքրքրասիրությունը չմարի ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ համոզված լինելով, որ աշակերտների մոտ ձևավորվող հենց նման հետաքրքրասիրությունն է այն գրավականներից մեկը, որոնք երաշխավորում են օտար լեզվի յուրացման արդյունավետությունը:

Տարրական դասարաններում մայրենի և օտար լեզուների միջև առկա տարբերությունների հետ կապված հարցերը վերաբերում են ոչ միայն գոյականի սեռին, այլ նաև հնչերանգին, տառամիացություններին, անգամ տառերին: Մասնավորապես, ինչու՞ է << e >> տառը գրվում տարբեր նշաններով (é, ê, è) և կարդացվում տարբեր կերպ, մինչդեռ հայերենում համանման օրինակներ չկան: Ավելի բարձր դասարաններում, երբ սովորողներն արդեն բավականին գիտելիքներ ունեն լեզվի մասին, ունեն համեմատաբար հարուստ բառապաշար, ծանոթ են նախադասության անդամներին և խոսքի մասերին, առաջ են գալիս նոր հարցադրումներ հայոց լեզվում և ֆրանսերենում իրարից էապես տարբեր կերպ կազմվող նախադասությունների առանձնահատկությունների մասին: Այսպես, օրինակ՝ աշակերտները, քաջատեղյակ լինելով մայրենի լեզվի քերականությանը, բնականաբար գիտեն, որ հայոց լեզուն անհամեմատ ճկուն է, ու քերականորեն թույլատրելի է կազմել այնպիսի նախադասություններ, որտեղ ենթական, ստորոգյալը, այս կամ այն պարագան տվյալ նախադասության մեջ կարող են և հաճախ հանդես են գալիս տարբեր դիրքերում, այսինքն, փոխում են իրենց գրաված տեղերը: Սովորաբար, մենք աշակերտների հետ միասին բերում ենք հայերեն տարբեր նախադասություններ և համոզվում հայերենի՝ վերը նշված առանձնահատկության մեջ: Դիտարկում ենք որևէ կոնկրետ նախադասություն, օրինակ. << Ես այսօր պատրաստվում եմ ժամը վեցին կինոթատրոն գնալ>>: Նկատում ենք, որ այս նույն նախադասությունը կարելի է գրել նաև հետևյալ կերպ. << Ժամը վեցին ես այսօր

պատրաստվում եմ գնալ կինոթատրոն>>, կամ << Այսօր ես պատրաստվում եմ կինոթատրոն գնալ ժամը վեցին >>: Ֆրանսերեն լեզվով թարգմանելու դեպքում նույն այդ նախադասությունը գրվում է հետևյալ կերպ. " Aujourd' hui je vais aller au cinéma à six heures": Այսպիսի օրինակների վրա աշակերտներն ակնառու կերպով համոզվում են, որ ֆրանսերենում նախադասության մեջ նախադասության անդամները, ի տարբերություն հայոց լեզվի, միմյանց նկատմամբ ունեն իրենց որոշակի, կայուն դիրքը, որը չի կարող խախտվել առանց համապատասխան քերականական կանոնը խախտելու: Մեկ այլ օրինակ.<< Այդ ես եմ, ով ամեն օր գնում է լողավազան>>: Այստեղ ևս մենք, աշակերտների հետ միասին, ուշադրություն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ հայերենում ստորադասական նախադասության մեջ ստորոգյալը համաձայնեցվում է հարաբերական դերանվան հետ: Նույն նախադասության ֆրանսերեն թարգմանությունը հետևյալն է. "C' est moi, qui vais à la piscine chaque jour": Տվյալ օրինակում ակնհայտորեն երևում է ֆրանսերեն լեզվի մայրենիից տարբերությունը, այն է, ստորադասական նախադասության ստորոգյալը միանշանակորեն համաձայնեցվում է ենթակայի հետ:

Մեր աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ մայրենիի և ֆրանսերեն լեզվի տարբերությունների վրա անհարկի շեշտադրումները որոշակիորեն բարդացնում են լեզվի ուսուցումը, որն արտահայտվում է աշակերտների կողմից թույլ տրվող, իրականում, << մեխանիկական>> սխալներում: Հաճախ նրանք այս կամ այն նախադասությունը հայերենից ֆրանսերեն են թարգմանում հայերենի իրենց իմացած կանոններով՝ չնայած նրանք տիրապետում են ֆրանսերենի համապատասխան կանոններին: Նման բացասական երևույթները նվազագույնի հասցնելու, ցանկալի է, իսպառ վերացնելու համար հարկավոր է կանխատեսել դրանք ու նախապես զգուշացնել աշակերտներին՝ հետագայում, թարգմանության ժամանակ ավելի ուշադիր լինելու ու սխալներից առավելագույնս խուսափելու համար: Մեր կարծիքով, առավել արդյունավետ է, երբ ուսուցիչը թեմաների մեկնարկը սկսում է աշակերտներին ֆրանսերեն լեզվի մայրենիից տարբերվող շարահյուսական ու ձևաբանական բարդությունների հետ ծանոթացումից, բարդություններ, որոնք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պահանջում են բացատրություններ ու

մեկնաբանություններ, հատկապես, երբ մայրենի և օտար լեզուների տարբերությունները սկզբունքային են:

Բառապաշարի ամենօրյա հարստացումը, օտար լեզվի քերականական կանոնների պատշաճ յուրացումը, լեզվական տարբեր միջոցների կիրառման հմտությունների ձեռքբերումը, լեզվական վարքի հնարավորինս պլանավորման կարողունակությունը, ինչպես նաև, ուսուցանվող լեզվի երկրի սոցիալ-մշակութային առանձնահատկություններին ծանոթությունը մեծապես օգնում են աշակերտներին ուսումնասիրվող օտար լեզվի յուրացմանը և նվազեցնում այն իրենց մայրենի լեզվի հետ պարբերաբար, անհարկի համեմատելու անհրաժեշտությունը: Այս ամենը գալիս է հաստատելու այն հանրահայտ ճշմարտությունը, որ օտար լեզվի ուսուցիչ կարող է և պետք է լինի այն անձը, ով ոչ միայն լավ գիտի իր մայրենին ու իր կողմից դասավանդվող լեզուն, սեփական երկրի ու դասավանդվող լեզվի երկրի պատմությունն ու մշակույթը, այլև << իրեն տեսնում է >> դրանց խաչմերուկում:

Եզրակացություն

Մանկավարժական – մեթոդական գրականության մեջ առկա են օտար լեզվի դասավանդման մեթոդների մասին բազմաթիվ տեսակետներ:¹ Տարբեր լեզվաբաններ ու մանկավարժներ առաջարկում են իրենց կողմից ուսումնասիրված, տարիներով փորձված ու մշակված ավանդական և ոչ ավանդական մոտեցումներ ու մեթոդներ, որոնք օգնում են ավելի արդյունավետ ու արագ յուրացնել օտար լեզուն: Ունենալ կարծիքով օտար լեզվի արագ և արդյունավետ յուրացումը պահանջում է տվյալ լեզվով գրականության հնարավորինս շատ ընթերցում՝ բառը տեսնելու և ընկալելու համար: Մյուսները գտնում են, որ օտար լեզուն արագ յուրացնելու համար հարկավոր է պատշաճ տիրապետել ուսումնասիրվող լեզվի քերականությանը: Մանկավարժների մի ստվար խումբ էլ շեշտը դնում է դերախաղերի, իրավիճակային երկխոսությունների վրա: Վերջապես, ոմանք էլ պնդում են, որ աշակերտը պետք է հաճախ լսի օտար լեզուն: Անկասկած, մեր համոզմամբ, բոլոր այս մեթոդները ոչ թե բացառում, այլ լրացնում են միմյանց և կարող են արդյունավետ լինել իրենց միասնության մեջ: Մեր ուսումնասիրություններն ու սեփական փորձը թույլ են տալիս կարծել, որ ուսուցանվող օտար լեզվի մեջ խորությամբ ներթափանցելու համար աշակերտներին անհրաժեշտ է այն համադրել իրենց մայրենիի հետ: Այդ համադրության արդյունքում սովորողները բացահայտում են լեզուների ընդհանրություններն ու առանձնահատկությունները, և ուսումնասիրելով մայրենի ու օտար լեզուների նմանություններն ու տարբերությունները, նրանք սկսում են վերլուծել լեզվական տարատեսակ խնդիրներ, մի բան, որը հնարավորություն է տալիս ամրապնդելու և հարստացնելու ձեռք բերած գիտելիքները: Ավելին, մենք միաժամանակ գտնում ենք, որ օտար լեզվի դասավանդման որոշակի փուլում, երբ աշակերտներն արդեն տիրապետում են կայուն գիտելիքների և ունեն շատ, թե քիչ

1. Տե՛ս, օրինակ, Методика обучения иностранным языкам, Казань, 2016, Л. В. Кнодель, Компетенция и компетентность в сфере обучения иностранным языкам, Киев, 2019, И. А. Бредихина, Методика преподавания иностранных языков, Екатеринбург, 2018

հարուստ բառապաշար, կարևոր է ապահովել նպաստավոր պայմաններ, որ նրանք քայլ առ քայլ սկսեն մտածել օտար լեզվով՝ առանց մայրենիի հետ զուգահեռներ անցկացնելու: Տվյալ օտար լեզվով մտածող աշակերտը, երբ այլևս այն չի համեմատում իր մայրենիի հետ, նա, հենվելով կուտակած բառապաշարի ու իր կողմից յուրացված քերականական կանոնների վրա, կարողանում է ազատորեն արտահայտել իր միտքը, միամգամից՝ առանց մայրենի լեզվի օգնությանը դիմելու: Օտար լեզվով մտածելուն օգնում է ն՝ բանավոր, և՛ գրավոր խոսքի հմտությունների մարզումը, տարատեսակ բնագավառներին առնչվող բառամթերքի ընդլայնումը: Անկախ այն բանից, թե ինչ մեթոդներով ենք առաջնորդվում օտար լեզվի դասավանդման գործընթացում, համոզված ենք, որ այդ գործընթացը պետք է հենվի մայրենի լեզվի պատշաճ իմացության վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Бредихина И. А., Методика преподавания иностранных языков, Екатеринбург, 2018
2. Кнодель Л. В., Компетенция и компетентность в сфере обучения иностранным языкам, Киев, 2019
3. Методика обучения иностранным языкам, Казань, 2016
4. <https://expeducation.ru/ru/article/view?id=11691>
5. <https://cyberleninka.ru/article/n/rodnoy-i-inostranny-yazyki-v-multikulturnom-mire-problemy-obucheniya/viewer>
6. <https://cyberleninka.ru/article/n/rol-rodного-yazyka-v-izuchenii-inostrannyh-yazykov-novy-rakurs/viewer>